



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 33

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Այնթապ համայնքի ավագանու 9 հերթական նիստի օրակարգը:

1.Այնթապ համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույթաչափեր սահմանելու մասին:

2.Այնթապ համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույթաչափերի հաստատման մասին:

3.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքի աղբահանության վճար վճարողների, աղբահանության վճարի հաշվարկման ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին:

4.Այնթապ համայնքի բնակիչ Հայրապետ Հայրապետյանի դիմումը քննարկելու մասին:

5.Հայաստանի Հանրապետության Այնթապ համայնքի ավագանու 18 հունվարի 2017 թվականի թիվ 02-Ա որոշման հավելվածի մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

6.Այնթապ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

7. Լիզինգային պայմանագրի միջոցով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու մասին:

8. Այնթապ համայնքի բնակիչ Ջոնիկ Գրիգորյանի դիմումը քննարկելու մասին:

9. Այնթապ համայնքի բնակիչ Հարություն Բարսեղյանի դիմումը քննարկելու մասին:

10. Այնթապ համայնքում խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու և Այնթապ համայնքի ավագանու 2012 թվականի թիվ 19 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:

11. Այնթապ համայնքի տարածքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒՆ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵԲՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 34-Ն

**ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան **համայնքի ավագանին որոշում է՝**

Սահմանել Այնթապ համայնքի 2018 թվականի համար տեղական տուրքերը և վճարները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐԴԻՇԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՍՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

8. ՍՈՒՐԱՂՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքում սահմանել 2018 թվականի տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,

500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3.000 /երեք հազար/ ՀՀ դրամ,

20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված

շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3.000 /երեք հազար/ ՀՀ դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5.000 / հինգ հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200.000 / երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50.000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 /վեց հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21.000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6.000 /վեց հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12.000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14.000 /տասնչորս հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 21.000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամ.

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

դ. խաղատների համար՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ 150.000 /հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 /հազար/ ՀՀ դրամ,

26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 /երկու հազար/ ՀՀ դրամ,

50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 /չորս հազար/ ՀՀ դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 /ութ հազար/ ՀՀ դրամ,

200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,

500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

11) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ակոնիոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.000 /երկու հազար/ ՀՀ դրամ,

բ. թունդ ակոնիոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3.500/երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1.500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,

դ. դատարկ գովազդային վահանակների համար՝ 375/երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,

ե. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 150 /հարյուր հիսուն/ ՀՀ դրամ,

12) Հայաստանի Հանրապետության Այնթապ համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10.000 /տասը հազար/ ՀՀ դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 500.000 / հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2.500.000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5.000.000 /հինգ միլիոն/ ՀՀ դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7.000.000 /յոթ միլիոն/ ՀՀ դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10.000.000 / տասը միլիոն/ ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքում սահմանել 2017 թվականի տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

2) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ.

3) Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1.000 /հազար/ ՀՀ դրամ.

7) Սահմանել աղբահանության վճարը ըստ շենքի գործառնական նշանակության՝

7.1 Բնակելի շինություններ կենցաղային աղբի համար, ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ.

7.2 Այլ շենքերի և շինությունների համար՝

ա) առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների համար՝ 1 քմ. 25 (քսանհինգ) ՀՀ դրամ.

բ) հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 15 (տասնհինգ)

գ) արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության մասով՝ 1 քմ. 5 (հինգ) ՀՀ դրամ.

դ) կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ 1 քմ. 2 (երկու) ՀՀ դրամ.

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար սահմանել՝
ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3.000 /երեք հազար/ ՀՀ դրամ.

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ.

9) աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 10.000 /տաս հազար/ ՀՀ դրամ.

10) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է վճար հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ 300 /երեք հարյուր/ ՀՀ դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ 5.000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.

4) մեկ ամսվա համար՝ 25.000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ.

5) մեկ տարվա համար՝ 100.000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1000 /հազար/ ՀՀ դրամ փոխհատուցման վճար:

13) Այնթապ համայնքի մսուր-մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար վարձավճարը սահմանել 5.000 (հինգ հազար) ՀՀ դրամ

13.1) Այնթապ համայնքում հաշվառում չունեցող յուրաքանչյուր երեխայի համար սահմանել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ:

3. Սույն հավելվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված դրույքաչափերը Այնթապ համայնքի 2-րդ գոտում գտնվողների համար կիրառել՝ 0.5 գործակից.

4. Սույն հավելվածի 1-ին մասի 1-3 կետերով սահմանված դրույքաչափերը Այնթապ համայնքի տարածքում կիրառել՝ 0.5 գործակից:

Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի և տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Համայնքի ղեկավար՝



Կարեն Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏՔԱՅՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերին համապատասխան
և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ
հոդվածի դրույթներով. **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Այնթապ համայնքի ղեկավարի աշխատավարձը՝ 269,000 /երկու
հարյուր վաթսուիններ հազար / ՀՀ դրամ:

2. Հաստատել Այնթապի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային
հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափերը՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

3. Ուժը կորցրած ճանաչել Այնթապ համայնքի ավագանու 18-ը նոյեմբերի 2016
թվականի թիվ 33-Ն <<Այնթապ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի
աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի,
հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> որոշումը:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ, ԱՅՆԹԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 27

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱԶԱՓ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ (ՀՀ դրամ)	ՀԱՎԵՆԱՎՃԱՐ (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	1	269.000	
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	1	203.000	
Օգնական	1	1	112.000	
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ				
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	1	219.000	
Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/, /2.3-2/, /2.3-3/	1	3	203.000	
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-1/, /3.1-3/	1	2	154.000	1540
Աշխատակազմի առաջատար մասնագետ/3.1-2/	1	1	154.000	
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/, /3.2-2/	1	2	129.000	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏՆԵՐ				
Հարկահավաք	1	3	93.000	
Գրադարանավար	1	1	80.000	
ՏԵԽՆՊԱՄԱՐԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ				
Հուշարձանի բանվոր	0.5	2	74.100	
Գերեզմանատան բանվոր	0.5	2	74.100	
Օպերատոր	1	1	100.000	
Համայնքի տարածքի վարորդ	1	1	132.000	
Ոստանդների վարորդ	1	1	120.000	
Դպրոցի վարորդ	1	1	85.000	
Էլեկտրիկ	1	1	74.100	
Հավաքարար	1		80.000	
Գործավար	1		100.000	

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»- Ի ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 33
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	1	165.000
Մեթոդիստ ուս. Գծով տնօրենի տեղակալ	1	1	115.000
Բուժքույր	1	1	78.000
Գլխավոր հաշվապահ	1	1	102.000
Հաշվետար-գանձապահ	1	1	78.000
Տնտեսվար	1	1	83.000
Գործավար	1	1	78.000
Խոհարար	1	1	75.000
Խոհարարի օգնական	1	1	74.100
Օժանդակ բանվոր	1	1	74.100
Շենքերի, սարքավորումների սպասարկող և նորոգող բանվոր	1	1	74.100
Երաժիշտ	1	1	120.000
Լվացարար /շուրջօրյա հաճախում չունեցող մանկապարտեզում	1	1	85.000
Հավաքարար	1	1	90.000
Դաստիարակ	1	6	132.000
Դաստիարակի օգնական	1	6	93.000
Գիշերային պահակ	1.5	1	85.000
Անգլերեն լեզվի դաստիարակ	0.5	1	132.000
Պարուսույց	0.5	1	132.000
Ֆիզկուլտուրայի հրահանգիչ	0.5	1	132.000
Հոգեբան	0.5	1	132.000
Դերձակ	0.5	1	78.000
Դռնապահ		1	74.100

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**« ԱՅՆԹԱՊԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ »- Ի ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 19
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)
Տնօրեն	1	1	80.000
Բժիշկ	1	4	218.000
Բուժքույր ընտանեական	1	3	95.000
Բուժքույր ընտանեական	1	1	100.000
Բուժքույր պրոցեդուրայի	1	1	81.000
Բուժքույր իմունիզացիայի	1	1	73.000
Բուժքույր դպրոցի	1	1	74.000
Մատենավար	1	1	78.000
Մանկաբարձ	1	1	78.000
Լաբորանտ	1	1	73.000
Օպերատոր	1	1	100.000
Վարորդ	1	1	95.000
Հաշվապահ	1	1	130.000
Հավաքարար	1	1	73.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԼԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, AynTap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 36-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԼԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴ ՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 16-րդ կետի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքի աղբահանության վճար վճարողների, աղբահանության վճարի հաշվարկման ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը համաձայն հավելվածի:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱՍՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ.

- 1.1. Սույն կարգը կարգավորում է Այնթապ համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը՝ չվճարելու, պարտավորությունները չկատարելու համար:
- 1.2. Աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Թափոնների մասին>> և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով:
- 1.3. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքից բխող սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Աղբահանություն՝ համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքում, փոխադրում աղբավայր.

Աղբ՝ կենցաղային աղբ, ոչ կենցաղային աղբ (արտադրական, շինարարական), խոշոր եզրաչափերի աղբ.

Սանիտարական մաքրում՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայրերի, անցումների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրում՝ աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, ճանապարհի երթևեկելի մասերի և մայրերի ջրում, լվացում, մաքրում ձյունից և սառույցից:

2. Աղբի հեռացման աշխատանքների իրականացնողը.

- 2.1. Համայնքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքներն (այսուհետ՝ աղբահանություն) իրականացվում է մրցույթային կարգով հաղթող կազմակերպության կողմից:

3. Աղբահանության վճարը.

- 3.1. Աղբահանության վճարը վճար վճարողների կողմից աղբահանության դիմաց <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով և սահմանված դրույքաչափերի սահմաններում համայնքի ավագանու կողմից սահմանված չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է:

4. Աղբահանության վճար վճարողների շրջանակը.

- 4.1. Աղբահանության վճար վճարողներ են համարվում համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերերը և արտոնագրային վճար վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը: Եթե միևնույն գույքի նկատմամբ սույն օրենքի իմաստով աղբահանություն վճար վճարող են համարվում մեկից ավելի անձինք, ապա

աղբահանության վճարի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

- 4.2.** Համայնքի ավագանին կարող է սահմանել աղբահանության արտոնություններ առանձին կատեգորիայի անձանց համար: Համայնքի ավագանու կողմից անհատական արտոնություններ սահմանելն արգելվում է:

5. *Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը.*

- 5.1. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային ծրագրով (ծրագրերով) հաշվից:

6. *Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպմանը ներկայացվող պահանջները.*

- 6.1. Աղբահանությունը և սանիտարական մաքրումը պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանքներն են՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ:

7. *Աղբի փոխադրմանը ներկայացվող պահանջները.*

- 7.1. Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը:

8. *Աղբահանության վճար կատարելու հիմքը, դրա դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը.*

- 8.1. Աղբահանության վճարի հաշվարկման կարգը, վճար սահմանելու համար կիրառվող մեթոդները և աղբահանության վճարի դրույքաչափերը սահմանում է համայնքի ավագանին, օրենքով սահմանված կարգով:

9. *Աղբահանության վճարի վճարման կարգը.*

- 9.1. Յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության վճարը պետք է վճարվի կանխիկ կամ անկանխիկ՝ հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:
- 9.2. Աղբահանության վճարի դրույքաչափի կամ դրա տեսակի փոփոխման դեպքում աղբահանության վճար հաշվարկողը հաջորդող ամսվա 10-ը ներառյալ աղբահանության վճար վճարողներին իրազեկում է հաշվարկված վճարի չափի մասին:

10. *Աղբահանության վճար վճարողներին հաշվառողները, աղբահանության վճարը հաշվարկողները և աղբահանության վճարի գանձումը.*

- 10.1. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը իրականացնում է համայնքապետարանի աշխատակիցների կողմից:

- 10.2. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին:
- 10.3. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

11. *Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքները և պարտականությունները.*
Աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքներն են՝

- 11.1. Ինքնուրույն հաշվարկել իրենց կողմից կատարվող վճարի չափը և ստուգել դրա համապատասխանությունը կատարված հաշվարկների հետ.
- 11.2. Ծանոթանալ իրենց կողմից կատարվող վճարի չափին և հաշվարկներին, ինչպես նաև տեղեկություններ ստանալ իրենց կատարած վճարումների մասին.
- 11.3. Օրենքով սահմանված կարգով բողոքարկել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման իրեն վերաբերող գործողությունները.
- 11.4. Համայնքի ղեկավարից պահանջել աղբահանությունը կազմակերպողի պարտավորությունների պատշաճ կատարում:

12. Աղբահանության վճար վճարողները պարտավոր են՝

- 12.1.** սույն օրենքով սահմանված ժամկետում և սահմանված դրույքաչափով վճարել աղբահանության վճարը.
- 12.2.** աղբը պահել և թափել դրա համար սահմանված կամ նախատեսված վայրերում:

13. Պատասխանատվությունը սույն օրենքը խախտելու համար՝

- 13.1. Աղբահանության վճարի վճարումը սույն կարգով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար աղբահանության վճար վճարողը, իսկ ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում աղբահանության վճար հաշվարկողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված աղբահանության վճարի գումարի 0,15 տոկոսի չափով, դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 180 օրվա համար.
- 13.2. առաջացած տույժերը հաշվարկվում և հաշվառվում (գանձվում) են աղբահանության վճարի վճարման ժամկետին հաջորդող ամսվա 1-ից.
- 13.3. Օպերատորը ՀՀ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ համայնքի բյուջե վճարելով տուգանք՝ չկատարված կամ ոչ պատշաճ կատարված աղբահանության յուրաքանչյուր դեպքի համար՝ հիստուն հազար դրամի չափով, եթե օպերատորի և համայնքի միջև կնքված պայմանագրով ավելի մեծ տուգանք սահմանված չէ:
- 13.4. Տուգանքի վճարումն օպերատորին չի ազատում չկատարված կամ ոչ պատշաճ կատարված պարտավորության կատարումից: Օպերատորի պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը (մարմինը):



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37

**ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայրապետ Հայրապետյանի դիմումը և համայնքապետարանի սոց. հանձնաժողովի եզրակացությունը, համայնք ավագանին որոշում է՝

Առաջարկել Այնթապ համայնքի ղեկավարին նույն համայնքի 16-րդ փողոցի թիվ 10/1 տան բնակիչ Հայրապետ Հայրապետյանին տրամադրել 100,000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ ֆինանսական օգնություն:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՐԴԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՄԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵԹՄԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆՈՒ 18
ՀՈՒՆՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 02-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
70-րդ հոդվածի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝

Այնթապ համայնքի ավագանու 18 հունվարի 2017 թվականի <<Այնթապ համայնքի
2017-2012 թվականի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> թիվ 02-Ա
որոշման հավելվածի 4-րդ կետի 9-րդ ենթակետից հետո ավելացնել 10-րդ ենթակետ
հետևյալ բովանդակությամբ՝ <<Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում>> և 5-րդ
կետի <<ծրագրի անձնագիր N 9>> ից հետո ավելացնել <<ծրագրի անձնագիր N 10>>
հետևյալ բովանդակությամբ՝

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 10

«Համայնքում գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գյուղատնտեսական տեխնիկային ձեռք բերումը համայնքի բնակիչների համար կստեղծի ավելի նպաստավոր պայմաններ գյուղատնտեսությամբ զբաղվելու համար

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ֆինանսավորման այլ աղբյուրներ
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերում

Կողմ -9

Ղեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆՂՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒՆ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

8. ՄՈՒՐԱՆՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 39-Ն

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին կետերին համապատասխան, համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Այնթապ համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒՆ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՑՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵԿՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Համայնքային մշակութային հիմնարկներ ծրագրի /8.2.3/ այլ կապիտալ դրամաշնորհներ
հոդվածը /4657/ բյուջեից պակասեցնել 1200.0 հղ-ով,

Բարձրագույն մասնագիտական կրթություն ծրագրի /9.4.1/ այլ նպաստներ բյուջեից
հոդվածը /4729/ ավելացնել 250.0 հղ-ով:

Առողջապահություն այլ դասերին չպատկանող կազմակերպություններին ծրագրի /7.6.2/
նվիրատվություն այլ շահութա չհետապնդող կազմակերպություններին հոդվածը /4819/
ավելացնել 200.0 հղ-ով:

Փողոցային լուսավորություն ծրագրի /6.4.1/ շենքերի և շինություններ ընփացիկ նորոգում
և պահպանում հոդվածը /4251/ ավելացնել 250.0 հղ-ով:

Հնդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծրագրի /1.6.1/ մասնագիտական
ծառայությունների հոդվածը ավելացնել 500.0 հղ-ով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  ՍԱՐԳՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԼԹԱՊ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 40

**ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ
ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 25-րդ կետի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝

Լիզինգային պայմանագրի միջոցով ձեռք բերել Բելառուս 89.2 տրակտոր, խոտհնձիչ, ատվահան, կուլտիվատոր, գութան, սրսկիչ, ակոսնիկ, Ամկոդոր 702 բեռնիչ-էքսկավատոր:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵԲՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԳ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԼԹԱՊ ԳՑՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 41

**ԱՅԼԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՋՈՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Ջոնիկ Գրիգորյանի դիմումը և համայնքապետարանի սոց. հանձնաժողովի եզրակացությունը, համայնք ավագանին որոշում է՝

Առաջարկել Այնթապ համայնքի ղեկավարին նույն համայնքի 13-րդ փողոցի 10-րդ նրբանցք թիվ 15 տան բնակիչ Ջոնիկ Գրիգորյանին տրամադրել 70,000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ ֆինանսական օգնություն:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒԼ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԼԹԱՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42

**ԱՅԼԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ ԴԻՄՈՒՍԸ
ՔՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի, 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հարություն Բարսեղյանի դիմումը և համայնքապետարանի սոց. հանձնաժողովի եզրակացությունը, համայնք ավագանին որոշում է՝

Առաջարկել Այնթապ համայնքի ղեկավարին նույն համայնքի 1-ին շարք թիվ 43 տան բնակիչ Հարություն Բարսեղյանին տրամադրել 100,000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ ֆինանսական օգնություն:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԹԱԹՈՒՆ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, Aynatap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 43

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 19 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 71-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 02 հունիսի 2016 թվականի թիվ 631-Ն որոշման պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Այնթապ համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողովի կազմը՝

- ☐ Շահինյան Սուրեն - նախագահ (մարզպետարանի կրթ. բաժնի աշխատակից)
- ☐ Ավագյան Ռուզաննա-քարտուղար (աշխատակազմի առաջատար մասնագետ)
- ☐ Բաղդամյան Սուրեն - անդամ (իրավաբան)
- ☐ Ալեքսան Հովհաննիսյան - անդամ (ավագանի)
- ☐ Խաչատրյան Հասմիկ - անդամ (ուսուցչուհի)
- ☐ Մուվախյան Հասմիկ - անդամ (աշխատակազմի առաջին կարգի մասնագետ)
- ☐ Ստեփանյան Նաիրա - անդամ (հոգեբան)

2. Ուժը կորցրած ճանաչել Այնթապ համայնքի ավագանու 2012 թվականի <<Այնթապ համայնքում խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 19 որոշումը:

Կողմ - 9

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

1. ԱՐԱՐԵԱՍՅԱՆ ԹԱՅՈՒՆ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱ

3. ԳԻՐԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐՈՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵԹՍԱՆ

8. ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀԱՅԿ

9. ՊՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Այնթապ, (0236) 6-05-06, Ayntap_hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 թվականի N 44-Ա

ԱՅՆԹԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգի>> 5-րդ գլխի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Աճուրդային կարգով օտարել պետական սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապ համայնքի 13-րդ փողոց 10-րդ նրբանցք թիվ 19 հասցեում գտնվող, 03-012-0097-0001 կադաստրային ծածկագիրը կրող, 1.74123 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը: Աճուրդի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ համար 1242 (հազար երկու հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:

2. Աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող, 03-012-0359-0010 կադաստրային ծածկագիրը կրող 0.29071 հա գյուղատնտեսական նշանակության հողամասը: Աճուրդի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքով՝ 1 քմ համար 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:

Կողմ -9

1. ԱՆԴՐԵԱՅԱՆ ԹԱԹՈՒՆ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՈՒՆԱՆ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

4. ԹԱՄՈՅԱՆ ՇԻՐԻՆ

5. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԱՄՎԵԼ

6. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱԼԵԽՍԱՆ

8. ՄՈՒՐԱՅԱՆ ՀԱՅԿ

9. ՂՈՂՈՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ